Մրցույթ՝ Երևանի «Մուրացանի անվան թիվ 18 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի Հայոց լեզու և գրականություն (6 դասաժամ), մաթեմատիկա 5 (դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հարցազրույցն անցկացվում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում(ձև 1), մեկ լուսանկար (3x4չափի)
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում):
- Ինքնակենսագրություն (Ձև 5)
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունք հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակերը համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացած փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 12- ից մինչև սեպտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ 10.00-15.00 –ը, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերին:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. սեպտեմբերի 28-ին, ժամը 13:00–ին**, Երևանի Մուրացանի անվան հ.18 հիմնական դպրոցում, հասցեն ք. Երևան, Բագրատունյաց 32:
Տեղեկությունների համար զանգահարել 011483971 հեռախոսահամարով: